ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 64

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0015-0010 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 44-րդ հոդվածի 2-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին կետով, 64-րդ հոդվածով, և հիմք ընդունելով հողհատկացման հիմքերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով 06-043-0015-0010 ծածկագրի տակ գտնվող բնակելի տնի և տնամերձ հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Սիրանուշ Անուշավանի Սահակյանի սեփականության 1/2 մասի իրավունքը, հիմք ընդունելով ժառանգության իրավունքի վկայագիրը /գրանցամատյանում N 4171, ժառանգությաքն գործ՝ թիվ 126/2021թ./ և Արթուր Կաղլենի Սահակյանի սեփականության 1/2 մասի իրավունքը, հիմք ընդունելով ժառանգության իրավունքի վկայագիրը / գրանցամատյանում N 4172, ժառանգության գործ թիվ 126-2021թ./:

2.Հաշվի առնելով, որ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերում սեփականատիրոջ կողմից նշված չափից մինչև 20% ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի կամ սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ ճանաչվում է նրանց սեփականություն: Սեփականատիրոջ վկայականում նշված է 0,1999հա, իսկ փաստացի հողամասը հանդիսանում է 0,268հա՝ հատկացումից ավել 0,0681հա հողամասի նկատմամբ ճանաչել Սիրանուշ Սահակյանի և Արթուր Սահակյանի սեփականության իրավունքը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 65

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ ՀՕ 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 10.05.2021 թ-ի թիվ 107 դրական եզրակացությունը և համայնքի ավագանու 12.05.2021 թ-ի թիվ 15 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Փոփոխել Լերմոնտովո համայնքի վարչական տարածքի համայնքային սեփականություն հանդիսացող, 06-043-0028-0001, 06-043-0028-0003, 06-043-0028-0004, 06-043-0028-0005, 06-043-0028-0006, 06-043-0028-0039 ծածկագրերով արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման

2. Միավորել 06-043-0028-0001 ծածկագրից տարանջատված, 06-043-0028-0006 ծածկագրով և 06-043-0028-0039 ծածկագրով հողամասերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետով միավորված 0.26762հա հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝

ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք 4փ. թիվ 5

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**